



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ադրբեջանի կրակոցները եւ չկողմնորոշվող համանախագահները

Վերջապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն զգացին սահմանային կրակոցների իրական ծայրն ու հոտը: Երկուդած համանախագահները ստիպված եղան պատասպարվել: Այդ մասին Ձեյմս Ուորլիքը գրառում կատարեց իր թվիթերյան միկրոբլոգում՝ բավարարվելով միայն պատասպարվելու հանգամանքն անընդունելի համարելու հաղորդագրությամբ, իսկ ավելի ուշ Մինսկի խումբը հանդես եկավ հայտարարությամբ, որում դարձյալ հավասարության նշան էր դրվում կողմերի միջև եւ չէր մատնանշվում կրակողի անուրը: Անընդունելին, սակայն, այն է, որ եթե համանախագահներն իրենց վրա կրակելու փաստը հանդուրժել չեն կարող, ապա հարց է ծագում, իսկ հայկական սահմանային գյուղերը գիշեր ու զօր կրակի տարափի տակ պահելը, հայ զինվորների ու խաղաղ բնակիչների զոհվելը, մանկապարտեզ ու դպրոց հաճախող երեխաներին սարսափի մեջ պահելը նրանք ընդունելի՞ են համարում: Գո՞ւցե պատասպարվելու եւ հերթական անհաջող հայտարարությամբ հանդես գալու փոխարեն վերջապես ժամանակն է համարձակությամբ շրջվել դեպի իրականությունը:

Փաստորեն, այս այցի ընթացքում Ադրբեջանը ոչ միայն ցուցադրեց իր բացահայտ արհամարհական վերաբերմունքը համանախագահող երկրների նկատմամբ, այլև ցանկացավ արտահայտել իր վերաբերմունքն այն մասին, որ այս ձեռնարկով խնդիրը լուծելն այլևս անօգուտ ու անընդունելի է համարում: Կրակոցները դիտարկումների ժամանակ ևս ևս անկանխատեսելի չէ, թե ինչ վարքագիծ կցուցաբերեն մեր հարեւանները հաջորդ դիտարկումների ժամանակ:

Ադրբեջանի կողմից հրահրվող սահմանային վիճակը հակամարտության կարգավորման գործընթացն օրըստօրե մղում է փակուղի, եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համար այլևս անխուսափելի պիտի դառնա արտակարգ միջոցներ կիրառելու խնդիրը, որից ամենազխափորը շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների ստեղծումն է, որի միջոցով հնարավոր կլինի վերջապես ձեռքբերել իսկազարիչ ու բազմիցս օգտագործվող «հավասարության նշանից»: Հարկ է հիշեցնել, որ հայկական կողմը միշտ էլ իր համաձայնությունն է արտահայտել սահմանային միջադեպերի հետաքննության վերաբերյալ, ինչին, սակայն, միշտ դեմ է եղել ադրբեջանական կողմը:

Նախօրեին ՀՀ Դաշնակցության Հայ Դատի գրասենյակի համար շանքերի շնորհիվ ԱՄՆ կոնգրեսի 85 անդամներ հանդես եկան բաց նամակով, որում կոչ է արվում նախագահ Օբամային եւ ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ ազդեցիկ ու բնութային տարածումը կանխող միջոցառումներ իրականացնել՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի մշտադիտարկումն իրականացնողներին պահելով շփման գծում եւ նրանց զինելով այնպիսի տեխնոլոգիաներով, որոնցով հնարավոր կլինի արձանագրել շփման գծի բոլոր խախտումները: Այս վերջին անհրաժեշտության մասին Երեւանում խոսել է նաեւ Ձեյմս Ուորլիքը: Անհավատալի է սակայն, որ դիտարկման պահին նույն Ուորլիքի եւ նույն համանախագահների համար դժվար էր կողմնորոշվել, թե կոնկրետ որ կողմից են կրակում իրենց վրա: Հարց է՝ հետագայում որեւէ այլ հանգամանք նրանց չի՞ խանգարի հստակ կողմնորոշվելու, թե՛ չկողմնորոշվելը դարձել է վարքագիծ: Ծիշող լսելու համար, ինչպես մեր պայքերն են ասել, հարցրեք երեխաներին: Պարոնաջ համանախագահներ, կրակոցների ուղղությունը ճշտելու համար դիմեք սահմանամերձ գյուղերում բնակվող երեխաներին:



Alvard Grigoryan

ԵԱՀԿ առաքելությունը դիտարկում է անցկացրել

Հոկտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ԵԱՀԿ առաքելությունը Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի դիտարկում է անցկացրել Մարտակերտ-Թարթառ ճանապարհահատվածում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ:

Դիտարկումն իրականացվել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի, դեսպան Անջել Կասպաչիկի գլխավորությամբ:

ԼՂ Պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնականներ Խրիստո Խրիստովը /Բուլղարիա/ եւ Իրժի Աբերլեն /Չեխիա/:

Շփման գծի հակառակ կողմից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգ-

նական Եվգենի Շարովը /Ուկրաինա/ եւ ԵԱՀԿ ԳԱԱՆ գրասենյակի աշխատակից Պետեր Սվեդբերգը:

Դիտարկման ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին անցել են ադրբեջանական տարածք՝ ԼՂՀ կողմից: Սակայն դիտարկման ավարտի պահին ադրբեջանական կողմից գրանցվել է ավտոմատ հրազենից գնդակոծություն հենց դիտարկողների ուղղությամբ: Այս վերաբերյալ նույն օրը ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ձեյմս Ուորլիքն անդրադարձել է Twitter-ի իր միկրոբլոգում՝ գրելով. «Շփման գիծն անցնելիս շարունակվող կրակոցները ԵԱՀԿ դիտորդներին ստիպեցին պատասպարվել. սա անընդունելի է»:

Ադրբեջանցիները հերքում են, որ կրակոցներն իրենց կողմից են եղել՝ սոցցանցերում այն որակելով ապատեղեկատվություն: Ավելին՝ նրանք իրականությունը փորձում են խեղա-

թյուրել՝ կրակոցները վերագրելով հայկական կողմին: Սակայն սա առաջին դեպքը չէ, երբ ադրբեջանական կողմը կրակում է հենց դիտարկման ընթացքում:

Հոկտեմբերի 29-ին Մինսկի խումբը հանդես է եկել հայտարարությամբ, որում դարձյալ հավասարության նշան է դնում կողմերի միջև եւ նշում, որ դիտարկման ժամանակ «անհայտ ուղղությամբ» կրակոցներ են եղել: Մինսկի խումբն իր հայտարարության մեջ բավարարվում է միայն շփման գծում «իրադարձարի ռեժիմի խախտման դեպքերը ԵԱՀԿ կողմից ուսումնասիրելու անհրաժեշտությունը» շեշտելով: Նա մատնանշում է, որ դիտարկման ժամանակ հնչած կրակոցները «հակամարտության կարգավորման հարցում առաջընթացը կանխելու փորձ է»: Սա, իհարկե, այն պատասխանը չէ, ինչ սպասում էին ղարաբաղյան կողմում, որովհետեւ զգաստանալու պահը դարձյալ ուշանում է՝ տեղի տալով նոր միջադեպերի:

Ամերիկացի 85 կոնգրեսականներ ԼՂ հարցով դիմել են Օբամային



asbarez.com-ի փոխանցմամբ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի 85 անդամներ՝ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսի եւ դեմոկրատ Էլիոթ Ենջիի գլխավորությամբ բաց նամակով դիմել են նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին...

Կարդացեք 2-րդ էջում


95 տարի հետո էլ խնդիրը շարունակում է մնալ արդիական



Սոյեմբերի 22-ին լրանում է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից 1920թ. Սոյեմբերի 22-ին ընդունված Իրավարար վճռի 95 ամյակը: Այս կապակցությամբ «Ապարաժ»-ը գրուցել է ՀՀ Դրցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, պատմաբան Վահրամ Բալայանի հետ:

Կարդացեք 3-րդ էջում

Համանախագահներին չի հետաքրքրում տարածաշրջանի խաղաղությունը. Լ.Հայրյան



ՀՀ Արցախի ԿԿ անդամ Լեւոն Հայրյանն անդրադարձել է օրերս սահմանում տեղի ունեցած միջադեպին:

- Կրակոցների ուղղության մասին լռելով՝ համանախագահները ոչ միայն անհարգալից վերաբերմունք են արտահայտում իրենք իրենց անձի նկատմամբ, այլև նորից ու նորից ցույց են տալիս, որ կատարում են լոկ քաղաքական պատվեր: Նրանք այստեղ են գալիս ոչ թե պատերազմական գործողությունները կասեցնելու, այլ սեփական երկրի համար հնարավոր շահեր կորզելու, մանիպուլյացիաներ անելու: Նրանք այստեղ փակ ելույթներ են ունենում փակ դռների հետևում, խուսափում են հասարակության եւ քաղաքական կուսակցությունների հետ հանդիպումներից: Ինչու՞ «ռեալիտիկ սիրող» համանախագահները չեն ուզում մի անգամ գոնե մեր ժողովրդի կարծիքն իմանալ: Սա ապացուցում է, որ նրանց չի հետաքրքրում տարածաշրջանի խաղա-

ղությունը: Դիտորդներն իրենց հաշվետվություն չեն տալիս, որ իրենք մեղավոր են անմեղ զոհերի համար: Իրենց երկրների հզորությունը նրանք թույլ է տալիս մտածել, որ իրենք մեղավոր չեն, ու եթե չխոսեն էլ՝ պաշտպանված են:

Այդ ուղղությամբ մի հետաքրքիր դրվագ հիշեցի. ստալինյան ժամանակներում հայտնի լեզվաբան Հրաչյա Աճառյանին բանտում ծեծում էին նրա իսկ ուսանողները: Երբ նա դիմեց իր ուսանողներին, թե ի՞նչ եք անում, չէ՞ որ պատմություն կա, պատասխանատվություն կա, հղիացած աշակերտները պատասխանեցին՝ քանի մենք կանք՝ պատմությունը չի լինելու, երբ պատմությունը լինի՝ մենք չենք լինելու: Այսինքն՝ մենք ազատված ենք պատասխանատվությունից:

Գու՞ցե համանախագահները նույն կերպ մտածում են՝ քանի որ ուժեղ երկրի ներկայացուցիչներ են կարող են, խուսափել պատասխանատվությունից: Սակայն մենք, որ 1988-ին բարձրացրինք աշխարհի ամենաժողովրդավար, ամենասկզբունքային ազգային-ազատագրական շարժումը՝ աշխարհին ցույց տալով, որ մենք ենք մեր իրավունքների, մեր երկրի տերը, մեղադրում ենք Միսսկի խմբին պատասխանատվություն չզգալու եւ իրենց պարտականությունները մեր հանդեպ թերի կատարելու համար: Մենք վճռական ենք մեր ազատությունը պաշտպանելու հարցում:

«ԱՊՍՈՍԺ»

Ադրբեջանն ապացուցեց, որ ո՛չ իրեն է հարգում, ո՛չ էլ միջնորդ պետություններին. Դավիթ Բաբայան



ԼՂՀ իշխանությունների հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ՝ պահանջված էր, քանի որ մտքեր են փոխանակվել ինչպես առկա իրավիճակի, այնպես էլ հակամարտության կարգավորման մասին: «Ստեղծվել է յուրահատուկ մի վիճակ, երբ կարգավորման մասին խոսելը, վերջնական կարգավորման հարցը դարձել է հեռավոր մի խնդիր:

Հանդիպմանը հիմնական շեշտը դրվել է ներկա իրավիճակի վրա: Խոսվել է սահմաններում իրավիճակի թուլացման մասին: Արցախյան կողմը կրկին ներկայացրել է առաջարկներ՝ առ այն, որ ուժեղացվի դիտորդական խմբի քանակական ներկայացուցչությունն ու տեխնիկական միջոցներ ձեռնարկվեն խախտումների մշտադիտարկման համար, որպեսզի գործողություններն ու հայտարարությունները հասցեական եւ դիպուկ լինեն: Մեղավոր կողմը պետք է պատասխան տա իր քայլերի համար», - «Արմենպրես»-ի հետ զրույցում ասել է ԼՂՀ նախագահի մամուլի խոսնակ Դա-

վիթ Բաբայանը: Անդրադառնալով մշտադիտարկման ժամանակ հակառակորդի կողմից արձակված կրակոցին՝ Բաբայանն ասել է, որ դա միայն անհարգալից վերաբերմունք չէր հյուրերի, միջնորդ պետությունների նկատմամբ: Դրանով Ադրբեջանն ապացուցեց, որ իրենք իրենց եւ իրենց ժողովրդին չեն հարգում: «Կրակոցից հետո սկսել են քարոզչություն, թե իբր դա հայերն են արել, մինչդեռ բոլոր փաստերն ապացուցում են, որ դա իրենք են արել: Այսպիսի մի անտրամալ պետության հետ մենք գործ ունենք: Հետեւաբար, միջազգային հանրությունը պետք է ավելի համարձակ քայլեր ձեռնարկի: Աստված մի արասցե, եթե նրանցից մեկի հետ մի բան պատահեր: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ տեղի կունենար», - ասել է Բաբայանը՝ հավելելով, որ վաղ թե ուշ գալու է այն օրը, երբ միջազգային հանրության եւ միջնորդ երկրների դիրքորոշումն ավելի կարծրացած եւ հաստատուն է լինելու: Բաբայանի գնահատմամբ՝ ամերիկացի 85 կոնգրեսականի՝ նախագահ Բարաք Օբամային ուղղած նամակն էլ առավելապես մեսիջ էր Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքին:

«Այդ կոնգրեսականները լավ պատկերացում են, թե ինչ կարող է լինել, եթե Ադրբեջանը շարունակի նույն կերպ: Հետեւաբար, այդ նախաձեռնությունը կարելի է միայն ողջունել, քանի որ դա ոչ թե հայամետ, այլ ողջամիտ քայլ է, որ բխում է իրենց պետության շահերից: Հատկապես այս կրակոցից հետո արձագանքը պետք է լինի ավելի մեծ ու բարձր», - ասել է Դավիթ Բաբայանը: «ԱՐՄԵՆՊՐԵՍ»

Ամերիկացի 85 կոնգրեսականներ ԼՂ հարցով դիմել են Օբամային



asbarez.com-ի փոխանցմամբ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի 85 անդամներ՝ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարցերով հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսի եւ դեմոկրատ Էլիոթ Էնջլի գլխավորությամբ բաց նամակով դիմել են նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի սահմանային գոտիներում ագրեսիայի եւ բռնության տարածումը կանխող խաղաղասիրական միջոցառումների իրականացմանն աջակցելու կոչով:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայ Դատի գրասենյակի հղումով, նա-

մակում մասնավորապես նշվում է, որ հայ-ադրբեջանական եւ ղարաբաղադրբեջանական սահմանային գոտիներում լարվածությունն ու բռնությունը կտրուկ աճել է, ինչի կապակցությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանությունները հնչեցնում են քննադատական տեսակետներ:

«Սակայն այդ քննադատությունները տեղ չեն հասնում, եւ վարչակազմը հետագա բռնությունները կանխելու նպատակով: Նախեստառաջ՝ բոլոր կողմերին կոչ է արվում հետ քաշել դիպուկահարներին, ԵԱՀԿ Մինսկի խմբի մշտադիտարկումն իրականացնողներին մշտապես պահել շփման գծում ու նրանց զինել այնպիսի տեխնոլոգիական համակարգերով, որոնք ճշգրտորեն կարծանագրեն շփման գծում տեղի ունեցած յուրաքանչյուր խախտում», - նշված է նամակում:

asbarez.com

ՀՀ Զարավային Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը ողջունում է Պարագվայի որոշումը



«Հոկտեմբերի 29-ին Պարագվայը դարձավ հարավամերիկյան յոթերորդ երկիրը, որն օրենսդիր իշխանության մակարդակով ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ չնայած թուրք-ադրբեջանական դիվանագիտական աշխույժ լրբեհնգին եւ ժխտողականության քաղաքականությանը, որը վերջին տարիներին գործադրում էին մայրաքաղաք Ասունսիոնում՝ մասնավորապես հարյուրերորդ տարեկիցի նախօրյակին», - ասված է ՀՀ Դաշնակցության Զարավային Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի հայտարարության մեջ, որով հանձնախումբը ողջունում է Պարագվայի Սե-

նատի հոկտեմբերի 29-ի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշումը:

«Հարյուրերորդ տարեկիցին Հայ Դատի հանձնախումբը գնահատում է քաջությունը, ճիգն ու հանձնառությունը բոլոր նրանց, ովքեր այս որոշմանը հետամուտ եղան եւ պատմական ճշմարտության ճանաչումը գերադասեցին ժխտողականության ճնշումներին: Պարագվայը կամովին միանում է ճշմարտության, հիշողության եւ արդարության համար միջազգային պայքարին եւ դառնում այդ պայքարի դրոշակակիրներից մեկը», - ասված է հայտարարության մեջ:

Պարագվայը, Ուրուգվայի, Արգենտինայի, Չիլիի, Բրազիլիայի, Բոլիվիայի եւ Վենեսուելայի քույր հանրապետությունների կողքին «կարելուր ներդրում է կատարում պատմական արդարության վերահաստատման, մարդկության դեմ ոճիրի ճանաչման, դատապարտման, ինչպես նաեւ ամեն ձեւի ժխտողականության դեմ պայքարի ազնիվ դատին»:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 29-ին Պարագվայի Սենատում ընդունվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող եւ դատապարտող բանաձեռ: Բանաձեռն ընդունվել է միաձայն:

yerkir.am

95 տարի հետո էլ խնդիրը շարունակում է մնալ արդիական

Նոյեմբերի 22-ին լրանում է ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից 1920թ. Նոյեմբերի 22-ին ընդունված իրավարար վճռի 95 ամյակը: Այս կապակցությամբ «Ապառաժ»-ը գրուցել է ՀՀ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԾ փոխնախագահ, պատմաբան Վահրամ Բալայանի հետ:

Այն հարցին, թե ինչո՞ւ Վուդրո Վիլսոնը նման առաջադեմ գաղափար առաջ բերեց, Վ. Բալայանը պատասխանել է. «Առաջին հերթին՝ նա գիտնական անձնավորություն էր, մտավորական: Նա խոսում էր այն ճշմարտությունների մասին, որոնք ինչ-որ մի տեղ ընկալելի է բարոյականություն ունեցող ազգերի մարդկանց համար: Պատմության մեջ հայտնի են նրա 14 նշանավոր կետերը, որոնք առաջարկվեց Վերսալյան համաձայնագիրը ստորագրելու ժամանակ:

1919թ. հունիսի 28-ին 14 կետերի մեջ առաջին անգամ բարձրաձայնվեց երեք հիմնական կարեւոր գաղափարներ՝ ժողովրդավարություն, կոլեկտիվ անվտանգություն եւ ազգերի ինքնորոշման խնդիր. այսինքն՝ երեք հիմնահարցեր, որոնք այսօր բավականին հրատապ են, երեք հիմնական սկզբունքներ, որոնց վրա այսօր փորձ է արվում կառուցել միջազգային դիվանագիտական հարաբերություններ: Ընդհանուր է՝ Միացյալ Նահանգների կոնգրեսը չհաստատեց Վերսալի համաձայնագիրը, որն ամփոփում էր Առաջին համաշխարհային պատերազմը: Այն իր մեջ պարունակում էր նաեւ Ազգերի լիգայի ստեղծման գաղափարը, իսկ ԱՄՆ-ի Կոնգրեսը այդ ժամանակ չէր ցանկանում կտրվել դեռեւս նախորդ ժամանակահատվածից՝ 19-րդ դարից եկող՝ ԱՄՆ-ում ընդունված այն հայտնի դոկտրիններից, որ ԱՄՆ-ն պետք է իր գործունեությունը սահմանափակի արեւմտյան կիսագնդում, այսինքն՝ չտարածվելով աշխարհի մյուս հատվածներում: Վիլսոնը ձգտեց ճեղքել

այդ ամենը՝ նպատակ ունենալով ԱՄՆ-ի պետականակերտման փորձը, որն իր մեջ ինչ-որ չափով պարունակում էր ժողովրդավարություն, տեղափոխել նաեւ Եվրոպա եւ աշխարհի մյուս հատվածներ:

Վիլսոնի գաղափարներն այս տեսանկյունից բավականին առաջադեմ էին, որոնք, ցավոք, միջուկ վերջ չիրագործվեցին:

Խոսելով Իրավարար վճռի կարեւորության մասին՝ Վ. Բալայանը նշել է. «Պետք է նկատենք, որ Վուդրո Վիլսոնը



Փարիզում փորձել է, որպէս ԱՄՆ-ի շահերը ներկայացնող գործիչ, մասնակցել համաշխարհային նշանակության հարցերի քննարկմանը: Վերսալում կնքվել էր Առաջին համաշխարհային պատերազմի ամփոփող պայմանագիր. մի կողմից ԱՄՆ-ն, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան եւ Ճապոնիան էին, իսկ մյուս կողմից՝ Գերմանիան: Հետագայում այս ամենը քննարկվել է նաեւ 1920թ. ապրիլի 25-29-ը՝ Փարիզի վեհաժողովում: Որոշվել էր, որ Հայաստանի երաշխավորը, նրա սահմանները ճշգրտողը եւ

Իրավարար վճիռը կայացնողը պետք է դառնա ԱՄՆ-ն՝ Նախագահ Վուդրո Վիլսոնի գլխավորությամբ:

1920թ. նոյեմբերի 22-ին Վուդրո Վիլսոնի կողմից ստորագրած փաստաթղթով պետք է ճշտվեր ՀՀ-ի եւ Թուրքիայի սահմանները: Արեւմտյան Հայաստանի Վան, Բիթլիս, Էրզրում, Տրապիզոն նահանգները, որոնց ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 103 599 քառ. կմ, պետք է անցնեին Հայաստանին, եւ ՀՀ տարածքը պետք է կազմեր 170 հազ. քառ. կմ: Հայաստանը էլք Կունենար դեպի ծով:

Այն հարցին, թե ինչո՞ւ Սերի պայմանագիրը եւ Իրավարար վճիռը մնացին թղթի վրա՝ Վ. Բալայանը պատասխանել է. «Դեպքերն այլ զարգացումներ ունեցան: Ինչպէս ասում են՝ այն ժամանակ հաշվի չառնվեց Ռուսաստանի կարծիքը, որը գտնվում էր քաղաքացիական պատերազմի շրջանում: Խորհրդային Ռուսաստանը դեռ նոր էր ոտքի կանգնում: Մյուս կողմից էլ՝ կային նաեւ Անգլիայի եւ Ֆրանսիայի շահերը, որոնք այլ բան էին թելադրում. նրանք կողմնակից էին, որ Թուրքիան մնա եւ գործի:

Ըստ Իրավարար վճռի՝ նշյալ տարածքները Հայաստանին անցնելու դեպքում Կոստանդնուպոլիսը պետք է լիներ առանձին պետություն, իսկ Անատոլիան ամբողջապես պետք է ձեւավորեր առանձին թուրքական պետություն:

Ցավոք, չընդունվեց Հայաստանի մանդատի հարցը, մյուս կողմից էլ՝ խոչընդոտ դարձավ նաեւ Հայաստանի Առաջին Հանրապետության կործանումը: Իրավարար վճիռը Եվրոպա հասավ միայն դեկտեմբերի 6-ին, երբ Հայաստանի Առաջին Հանրապետությունն այլեւս գոյություն չուներ»:

Խոսելով Վիլսոնի իրավարար վճռի արդիականության մասին՝ Վ. Բալայանը շեշտել է. «ՀՀ իշխանությունները կարող են այսօր եւս հետամուտ լինել այս հարցի լուծմանը, միջազգային ատյաններում պաշտպանել մեր ժողովրդի իրավունքները, որոնք իրենց մեջ պարունակում են ե՛ւ տարածքային, ե՛ւ, ինչո՞ւ չէ, նաեւ տարածաշրջանային ազդեցության հարցեր: Այդ պայմանագրի կետերը բխում են միջազգային իրավունքի նորմերից, ուստի՝ ե՛ւ մեր ժողովուրդը, ե՛ւ իշխանությունները պետք է հետամուտ լինեն Վիլսոնի իրավարար վճռի իրականացմանը»:

Թե ինչո՞ւ այսօր ԱՄՆ-ն չի խոսում այդ վճռի մասին, Վ. Բալայանը նշել է, որ այս հարցում բախվում են մեծ երկրների մեծ շահերը. «Նավթն ավելի ծանրակշիռ փաստարկ է, քան հայերի արյունը,- մեջբերել է Անգլիայի վարչապետ Լյորդ Ջորջի հայտնի խոսքերը եւ նշել,- ես կարծում եմ, որ այս խոսքերով ամեն ինչ ասվում է: Միջազգային, միջպետական հարաբերությունները մշտապես հենվել են շարունակում են հենվել շահի վրա: ԱՄՆ-ն այսօր շարունակում է առաջնորդվել նույն սկզբունքներով»:

Հարցազրույց՝ Լ. ԹԵՎՈՅԱՆԻ

Խորհրդարանական կառավարման համակարգ ունենալը ՀՀ-ի համար համոզմունք է. Լեւոն Հայրյան

Հայաստանում այս օրերին բուռն քննարկման թեմա է առաջիկայում կայանալիք սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեն: Թե Արցախում որքան է այս թեման իրատեսական՝ գրուցեցինք ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ անդամ Լեւոն Հայրյանի հետ:

- Պրն Հայրյան, ո՞րն է Ձեր կարծիքը օրերս քննարկվող սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ:

- ՀՀ Դաշնակցության անդամները բազմիցս իրենց ելույթներում բարձրաձայնել են մեր երկրում խորհրդարանական կառավարման համակարգ ունենալու անհրաժեշտության մասին: Այս անհրաժեշտությունը արդիական է նաեւ այսօր՝ Հայաստանի եւ Ղարաբաղի պարագայում: ՀՀ Դաշնակցության համար սաղ թե կարծիք է, այլ՝ համոզմունք, մանավանդ հին, փորձված դաշնակցականների համար: Նշեմ, որ 1918 թվականին, երբ Դաշնակցությունը կանգնած էր իշխանության գլուխ, Հայաստանում եղել է հենց խորհրդարանական կառավարում: Հետագայում այս փորձը

նաեւ Արցախի պետականության ստեղծման ժամանակ է կիրառվել, երբ ԼՂՀ Գերագույն խորհրդում ՀՀ-ն մեծամասնություն էր: Այդ ժամանակ Ար-



ցախում իրականացվել է կառավարման խորհրդարանական համակարգը, որին որոշ հայտնի ուժեր խոչընդոտել են՝ 1996 թվականին խորհրդարանա-

կան հանրապետությունը դարձնելով նախագահական: Դա, կարծում եմ, Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ եւ Ռ.Զոհարյանի գործուն մասնակցու-

թյամբ կատարված հեղաշրջում էր: Այսօր մեր երկրի զարգացման մեջ շահելու համար անհրաժեշտ են սահմանադրական փոփոխություններ, որոնք

կտանեն դեպի խորհրդարանական կառավարում եւ 100 տոկոս մեծամասնական ընտրահամակարգ: Կառավարման այս ձեւը նաեւ նպաստում է ժողովրդավարության սկզբունքների ամրապնդմանը: Արցախի զարգացման ճանապարհի համար սա ավելի քան անհրաժեշտ է:

- Այսօր Արցախում սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտություն են:

- Սահմանադրական բարեփոխումներն Արցախում անհրաժեշտություն են: Սա ՀՀ Դաշնակցության Արցախի ԿԿ-ի պաշտոնական կարծիքը չէ, բայց ԿԿ նիստերի ժամանակ բազմիցս քննարկվել է այս հարցը, ուստի, կարելի է համարել, որ իմ կարծիքը հեռու չէ պաշտոնական կարծիքից:

ՀՀ-ն աշխարհի հազվագյուտ կուսակցություններից է, որն իր որոշումներն ընդունում է կոլեգիալ ձեւով, եւ պետության կառավարման մեջ, կարծում եմ, արդյունավետ է այս մոտեցումը:

«ԱՊՐԱՍԺ»

Ինտելեկտուալ խաղ՝ նվիրված ՀՀ Դաշնակցության 125-ամյակին



«Ռենեսանս», Շուշիի «Ակորդ» և «Մետրոպ Մաշտոց» համալսարանի «Wolf Street» թիմերը:

Խաղի պատասխանատու, ՀՀԴ ԱԵՄ-ի Վարիչ մարմնի անդամ Արամայիս Աղաբեկյանի խոսքերով՝ այսօր Արցախում մեծ հետաքրքրություն է նկատվում ինտելեկտուալ խաղերի նկատմամբ: Այդ է վկայում այն, որ խաղին մասնակցելու դիմորդները բավականին շատ էին:

ՀՀԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ հոկտեմբերի 23-25-ը Ստեփանակերտի շախմատի մասնկապատանեկան դպրոցում տեղի է ունեցել ՀՀԴ 125- ամյակին նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթ:

Մրցույթի առաջին փուլը կազմակերպվել է հոկտեմբերի 23-ին, որին մասնակցություն են ցուցաբերել 15-25 տարեկան երիտասարդներ Ստեփանակերտից ու շրջաններից: Խաղին մասնակցում էին՝ Ասկերանի շրջանի «Խաչեն», Մարտակերտի «Ջրաբերդ», Մարտունու «Մոնթե», ԱրՊՀ-ն ներկայացնող

«Սա յուրօրինակ հնարավորություն է տալիս երիտասարդներին թե՛ գիտելիք ձեռք բերելու, թե՛ ստացած գիտելիքներն օգտագործելու, ինչո՞ւ չէ, նաև նոր ծանոթությունների ու հետաքրքիր ժամանակ անցկացնելու համար», - նշել է Արամայիս Աղաբեկյանը՝ ավելացնելով, որ ինտելեկտուալ խաղերի կազմակերպումը ՀՀԴ ԱԵՄ-ի կողմից արդեն բարի ավանդույթ է դարձել և կրելու է շարունակական բնույթ:

Հոկտեմբերի 25-ին ՀՀ Դաշնակցության Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ Ստեփանակերտի շախմատի մասնկապատանեկան

դպրոցում անց է կացվել ՀՀԴ 125-ամյակին նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթի եզրափակիչ փուլը, որին մասնակցում էին 14 թիմեր:

Մրցույթին ներկա էր ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, պատմաբան Վահրամ Բալայանը:

Խաղին մասնակից թիմերից հաղթող է ճանաչվել ԱրՊՀ «Ռենեսանս» թիմը: Երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրել են Ստեփանակերտի 11-րդ ավագ դպրոցի «Ասալա» և Մարտունու ավագ դպրոցի «Մոնթե» թիմերը:

Առաջին տեղը զբաղեցրած թիմն ար-

ժանացել է դրամական պարգևի և պատվոգրի:

Մրցանակային տեղեր զբաղեցրած մյուս թիմերը պարգևատրվել են պատվոգրերով և հայտնի դասականների՝ հայերեն թարգմանությամբ գրքերով:

Նշենք, որ այս տարի լրանում է ՀՀ Դաշնակցության 125-ամյակը, որի կապակցությամբ ՀՀԴ Արցախի կառույցի նախաձեռնությամբ Արցախում տեղի կունենան մի շարք միջոցառումներ: Միջոցառումների մեկնարկն արդեն իսկ տրված է:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Ստորումներ

Հայաստանի տնտեսական զարգացումն ու վերականգնումը՝ թե՛ անհրաժեշտ, թե՛ հնարավոր



Հայաստանի տնտեսական վերականգնումն անհրաժեշտ է, որովհետև առանց դրան մեր երկրի հասարակական որեւէ բնագավառ՝ գիտություն, արվեստ, մշակույթ ու նաև ժողովրդավարություն, զարգանալու հնարավորություն չի ունենա:

Հայաստանի տնտեսական վերականգնումը նաև հնարավոր է, որովհետև մեր ժողովուրդը բոլոր առումներով մեծ կարողականությամբ օժտված ժողովուրդ է. մնում է միայն օգտվել այդ կարողականությունից:

Հայաստանի տնտեսական վերականգնումը միեւնույն ժամանակ համազգային հարց է, և համազգային հարցերը կարելի է լուծել համազգային ճիգերով: Եթե որեւէ քաղաքական կազմակերպություն ժողովրդականություն ձեռք բերելու միտումով փորձի միայնակ այն լուծել, ոչ թե կնպաստի մեր երկրի տնտեսական զարգացմանը, այլև կխոչընդոտի: Այսպիսի հարցերը չի կարելի մենաշնորհի վերածել:

Սփյուռքի հայության մեջ ազգային պատկանելության և պատասխանատվության զգացումն ու գիտակցությունն արթնացնելու ու խթանելու նպատակով պետք է Սփյուռքի հայերին դարձնել Հայաստանի քաղաքացի:

Սփյուռքի հայության մեջ Հայաստանի քաղաքացի դառնալու ցանկություն առաջացնելու նպատակով մեր կրոնական հաստատությունները, քաղաքական կազմակերպությունները և խմբավորումները համատեղ ջանքերով միջոցառումներ ու հավաքներ պետք է կազմակերպեն: Պետք է օգտվել նաև արդիական հաղորդակցության բոլոր միջոցներից՝ լրատվամիջոցներից, մամուլից, համացանցից և էլեկտրոնային նամակներից, որոնց միջոցով կարող են մատնանշած ցանկությունն առաջացնել հայ համայնքներում:

Այն կազմակերպություններն ու հաստատությունները, որոնք ունեն հազարավոր անդամներ ու համակիրներ, առանձնաբար կարող են հիշյալ միջոցներից դիմել իրենց շրջանակներում: Այս բոլորը կարելի է անել ժողովրդի ու տարբեր մարդկանց կարծիքն ու տեսակետը լսելով և հարցը ժողովրդի սեփականությունը դարձնելով, քանզի որեւէ հասարակական հարց իր լուծմանը կարող է հասնել ժողովրդի մասնակցությամբ:

Հայաստանի տնտեսական վերականգնումը խթանելու համար մեր քաղաքական կազմակերպությունները և տարբեր խմբավորումները միասնաբար կարող են հրավիրել և համախմբել հայ գործարարներին, ձեռնհաս ու մասնագետ մարդկանց միջոցով կարող են մեր երկրի տնտեսական կացության մասին նրանց տեղեկություններ փոխանցել:

Հայ գործարարները կարող են համախմբվել և մեծ ընկերություններ ստեղծել: Որպես արտասահմանյան մեծ

ու նյութապես հզոր ընկերություններ՝ մուտք գործել Հայաստան և այնտեղ ներդրումներ կատարել: Գիտենք, որ Հայաստանում առանձին գործարարներ, իրենց գործունեության ընթացքում խոչընդոտների են հանդիպում, սակայն մեր հիշած մեծ ու նյութապես հզոր արտերկրյան ընկերությունները, իբրև արտասահմանյան մեծ ու հզոր ընկերություններ, խոչընդոտների չեն հանդիպի, ինչպես նման խոչընդոտների չեն հանդիպում Հայաստանում գործող բազմազգային հզոր ընկերությունները:

Վերը հիշված ընկերությունները, որոնք բաժնեկիցները հայեր են, հավանաբար այլ օտար ընկերությունների նման իրենց շահը արտասահման չեն փոխադրի: Նրանք կընդարձակեն իրենց գործունեությունը և նոր աշխատատեղեր ստեղծելով կբարձրացնեն հայրենաբնակ մեր ժողովրդի կենսամակարդակը:

Հայաստանում ընկերությունների հաջողության հասնելու դեպքում մեծ հավանականությամբ Սփյուռքում կառաջանան նման այլ ընկերություններ, որոնք նոր թափ հաղորդեն Հայաստանի տնտեսական վերականգնմանը: Վերոնշյալ ընկերությունները հաջողության պարագայում կարող են բաժնեթղթային դրություն ստեղծել, հայ աշխատավորներին մասնակից դարձնել իրենց ներդրումներին և տնտեսական ներդրումները ժողովրդականացնել: Հայաստանն իր տեխնոլոգիան զարգացնելու համար կարիք ունի խտացնելու արեւմտյան տեխնոլոգիաները:

Սփյուռքում՝ հատկապես արեւմտյան երկրներում, կան բազմաթիվ մասնագետներ, վարպետներ ու արհեստավորներ, որոնք եւս վերոհիշյալ ձեռքով կարելի է համախմբել: Կարելի է հայ գործարարների ջանքերով մեր երկրում արհեստագիտական դպրոցներ բացել և

հիշյալ մասնագետների երթուղարձի ու կեցության ծախսերը հոգալ: Կարելի է նրանց՝ իբրև կամավոր ուսուցիչներ, Հայաստան ուղարկել հիշյալ դպրոցներում դասավանդելու և իրենց հարուստ փորձը հայրենի երիտասարդությանը փոխանցելու նպատակով:

Հիշյալ արհեստագիտական դպրոցների պատասխանատուները հավանաբար կկարողանան դպրոցների շրջանավարտների համար համապատասխան գործ գտնել:

Մասնագետ արհեստավորներից ոմանք կամ շատերը հավանաբար իրենք կհոգան իրենց երթուղարձի և կեցության ծախսերը, և նրանք, արհեստագիտական դպրոցներում դասավանդելով, ոչ միայն օգտակար կդառնան մեր երկրին, այլև կիմաստավորվի իրենց կյանքը և հոգեկան բավարարություն կզգան:

Գործարարներից ու մասնագետ արհեստավորներից բացի կարելի է համախմբել նաև հայ բժիշկներին, գիտնականներին և թերևս նաև Սփյուռքի հասարակական այլ շերտերին, որոնց թիվը մեծ ու է ներկայացնում: Օրինակ Ավստրալիայում մենք ունենք շուրջ 70 բազմամիլիոնատեր գործարարներ և համարյա նույնքան էլ՝ իրավաբանական տարբեր ոլորտներում աշխատող իրավաբաններ: Ավստրալիայի գաղութը Սփյուռքի համեմատաբար երիտասարդ և փոքր գաղութներից է:

Հայաստանում բազմազգակությունը քաջալերելու համար եւս կարելի է համախմբել հասարակական տարբեր շերտերի:

Այս բոլորն իրականացնելու համար համապատասխան մասնագետների օգնությամբ կարելի է կազմել ճշգրիտ նախագծեր:

Այվագ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Լու ԱՆՁԵԼԵՍ

Հանրակացարանի 50 բնակիչներ 2016 թվականին կվերադառնան վերանորոգված բնակարաններ



Ստեփանակերտի Ա. Մանուկյան 120ա հասցեում գտնվող հանրակացարանում սույն թվականի հոկտեմբեր ամսից սկսվել են վերակառուցման աշխատանքները:

Շենքը կառուցվել է դեռևս 1960 -ական թվականներին՝ մետաքսկոմբինատի աշխատակիցների համար:

Այն երկար տարիներ վթարային վիճակում էր. շենքում բացակայում էին կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանները: Ամբողջ հարկի համար նախատեսված էր ընդամենը մեկ սանհանգույց և մեկ խոհանոց:

Բնակիչներից միայն մի քանիսը տարիների ընթացքում սեփական միջոցներով վերանորոգել են իրենց բնակարանները, կառուցել առանձին սանհանգույց: Շենքում բնակվում էր 70 ընտանիք:

Այս պահի դրությամբ սկսվել են հանրակացարանի առաջին շքամուտքի վերակառուցման աշխատանքները: Շքամուտքի բնակիչներն արդեն տեղափոխվել են այլ բնակարաններ, բացառությամբ մեկ հոգու, ով դա պատճառաբանում է նրանով, որ առ այսօր կառավարության կողմից խոստացած բնակվարձը դեռ չի ստացել:

ԼՂՀ վարչապետի մամուլի խոսակ Արտակ Բեգլարյանի խոսքերով՝ բնակվարձերի տրամադրումն ընթացքի մեջ է, և այս պահին բնակիչների մեծամասնությունն արդեն ստացել է այն:

Կառավարությունը յուրաքանչյուր ընտանիքի ամսական կվճարի 50 հազար դրամ բնակվարձ, մինչև նրանք կկարողանան տեղափոխվել իրենց՝ արդեն վերանորոգված բնակարանները:

ԼՂՀ կառավարությունը հայտարարել է, որ այս շենքի վերանորոգման աշխատանքները Ստեփանակերտի վթարային հանրակացարանների վերանորոգման իրականացման ծրագրի սկիզբն է:

Այժմ Ստեփանակերտում գործող 7 հանրակացարաններից գրեթե բոլորն անմիջապես վիճակում են:

ԼՂՀ քաղաքաշինության նախարարության մամուլի բաժնի պատասխանատու Գրիգորյանի խոսքերով՝ այս պահին սկսվել են շինարարական աշխատանքները Մանուկյան 120ա շենքի միայն մեկ շքամուտքում: Այն ավարտելուց հետո կսկսվի 2-րդ, ապա՝ 3-րդ շքամուտքերի վերակառուցումը:

«Շինարարության առաջին փուլում նախատեսված են քանդման, վերահատակագծման ու տանիքի կառուցման աշխատանքները: Այն ամբողջությամբ կապամոնտաժվի, նոր սենյակներ ու պատշգամբներ կավելանան: Այստեղ աշխատանքներն ավարտելուց հետո նախատեսված է վերակառուցել նաեւ Ա. Մանուկյան 120 շենքը: Այս ծրագրով կառավարությունը հանրակացարանները կդարձնի քաղաքաշինական նորմերին համապատասխանող շենքեր՝ անհրաժեշտ ենթակառուցվածքներով, կոմունալ հարմարություններով», - «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Գրիգորյանը:

Գրիգորյանի խոսքերով՝ ընտանիքներից մի քանիսը նոր բնակարաններ կստանան նորակառուց շենքերից, մյուսները կտեղափոխվեն արդեն նախկին հանրակացարան, որովհետեւ հանրակացարանի շենքը կհամապատասխանեցնեն արդի շինարարության նորմերին ու կավելացնեն նոր սենյակներ:

Առաջին շքամուտքի շինարարական աշխատանքները կվերջանան 2016 թվականին, իսկ ընդհանուր շենքի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2017 թվականը:

Ընդհանուր շենքում կվերակառուցվեն 50 բնակարաններ, յուրաքանչյուր ընտանիք կստանա այնքան բնակարան, որքան նախկինում ուներ:

Ա. ՆԱՐԻՅԱՆ



«Թումո»-ն հնարավորություն է տալիս առանց որևէ սահմանափակման ստեղծագործելու



Այս տարվա սեպտեմբերի 2-ին տեղի է ունեցել Ստեփանակերտի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի բացումը, իսկ հոկտեմբերի 5-ից այն սկսել է իր դասընթացները: Արդեն ընթանում է դասընթացների երրորդ շաբաթը:

Այս պահին կենտրոնում գրանցված են 12-18 տարեկան 750 ուսանողներ և դեռ մոտ 150 ուսանողներ կարող են գրանցվել:

Ստեփանակերտի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հարողակցման բաժնի ղեկավար Չառա Բուդաղյանի խոսքերով՝ կենտրոնի հանդեպ շատ մեծ հետաքրքրություն է նկատվում. երկու շաբաթվա ընթացքում գրանցվել են 500-ից ավելի երեխաներ՝ Ստեփանակերտից, Շուշիից, Ասկերանից, մոտակա գյուղերից: Հնարավոր է, որ ապագայում աշխատեն նաև այլ շրջանների հետ:

Այժմ պատանիները կենտրոնում կատարում են սկզբնական վարժանքներ 4

հիմնական ոլորտներում՝ անիմացիա, կայքերի, խաղերի և ֆլիմերի ստեղծում, որոնց միջոցով նրանք նախապատրաստվում են կենտրոնի դասընթացներին: Փուլ առ փուլ վարժանքներն անցնելուց հետո ուսանողները կարող են ընտրել այն ոլորտը, որոնք ամենաշատը կհետաքրքրեն նրանց:

Այս գործընթացը կտեղի մեկից մինչև երկու ամիս, որից հետո կսկսվեն դասընթացները: Արդեն նոյեմբերի համար նախատեսված է անցկացնել դասընթաց, որը կվարի իտալացի հայտնի ֆոտոլրագրող, ֆոլոլուսանկարիչ Պիեռ Պաոլո Չիտտոն, ով կփոխանցի ֆոտոլրագրության ասպարեզում իր հմտությունները:

Բացի դրանից, կլինեն նաև «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի մշտական դասընթացներ, որոնք անց են կացնելու «Թումո»-ի՝ Երեանից ժամանած մասնագետները:

Չառա Բուդաղյանի խոսքերով՝ «Թումո»-ում միայն մեկ ընտրության չափանիշ կա՝ տարիքային սահմանափակումը. դիմորդները պետք է լինեն 12-18 տարեկան: Ընդունելության համար հարցազրույց կամ քննություն չի անցկացվում: Բոլոր դիմորդներին ընդունում են և հավասարապես տալիս զգալի հնարավորություններ, իսկ արդեն վերջում նրանց ընտրությունն է, թե ինչպես կբանեցնեն այդ գիտելիքները:

«Նրանք կարող են հաճախել կենտրոն՝ չունենալով նույնիսկ համակարգչային տարրական գիտելիքներ: Այստեղ նրանք կդառնան լավ մասնագետներ: Նրանցից

միայն պահանջվում է ցանկություն և փոքր-ինչ պատասխանատվություն», - նշում է նա:

Ստեփանակերտի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վիգեն Բալայանն ասում է, որ Արցախից իրենց սպասումներն ավելի քան արդարացված են: Երեխաները ժամանակին հաճախում են դասընթացներին, չեն բացակայում, ակտիվ են, շատ արագ են ըմբռնում:

«Փորձում ենք այնպես անել, որ նրանք ուրիշ մտածելակերպ ունենան, գիտակցեն, որ կարող են ստեղծագործել՝ օգտագործելով համակարգիչ, թուղթ, գրիչ՝ այն, ինչ ունեն ձեռքի տակ, և կարող են աշխատանքն անել աշխարհի ցանկացած կետում: Նրանց հնարավորություններ են տրվում ստեղծագործելու՝ առանց որևէ սահմանափակման»:

Բացի «Թումո»-ի չորս հիմնական ոլորտներից՝ անիմացիա, խաղերի ստեղծում, կայքերի մշակում ու ֆլիմերի ստեղծում, ուսանողները նաև ծանոթանում են 21-րդ դարի գանազան հմտությունների, ինչպիսիք են՝ 3D մոդելավորումը, երաժշտությունը, ռոբոտաշինությունը, լուսանկարչությունը, գրաֆիկական դիզայնը և այլն:

Այսպես Գասպարյանը Ստեփանակերտի «Թումո» է այցելում՝ կենտրոնի բացման առաջին իսկ օրվանից: Խոստովանում է, որ սպասվածից շատ ավելի հետաքրքիր է կառուցողական է անցնում առօրյան. «Ինձ ամենաշատը դուր է գալիս անիմացիան, և կենտրոնի շնորհիվ արդեն գիտեմ, թե ապագայում ինչով եմ զբաղվելու: Վստահ եմ, որ այստեղ ձեռք բերած գիտելիքներս կօգնեն ինձ իրագործել մուլտիպլիկատոր դառնալու երազանքս»: Հիշեցնեց, որ «Թումո» կենտրոններ կան նաև Երեանում, Դիլիջանում և Գյումրիում, որտեղ անվճար սովորում են հազարավոր պատանիներ:

Արմինե ՆԱՐԻՅԱՆ



Ստեղծագործական մրցույթ նվիրված ՀՀԴ 125 ամյակին

ՀՀ Ռազնակցության Արցախի կառույցը հայտարարում է «ՀՀ Ռազնակցությունը 125 տարեկան է» խորագրով ստեղծագործական աշխատանքների մրցույթ: Մրցույթին կարող են մասնակցել ուսանողներ եւ ավագ դասարանի աշակերտներ:

Ստեղծագործական ախատանքների թեմաներն են.
«**Աշակերտների համար՝ «Գաղափարի զինվորն անպարտելի է»**,

«**Ուսանողների համար՝ «Հավատամքս է Ազատ, Անկախ, Միացյալ, Հայաստան»:**

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են մինչեւ ս. թ. դեկտեմբերի 5-ը: Հաղթողների անունները կհրատարակվեն Ստեղծագործական մրցույթի կայքէջում:

Ֆինանսավորում կայանալիք ՀՀ Ռազնակցության 125-ամյակին նվիրված տոնական միջոցառման ընթացքում:

ժյուրիի կողմից ընտրված լավագույն ստեղծագործությունների հեղինակները կարժանանան դրամական պարգևների: Աշակերտների եւ ուսանողների համար կսահմանվեն առանձին մրցանակային տեղեր.

Ուսանողների համար՝

- 1-ին տեղ՝ 80.000 դրամ
- 2-րդ տեղ՝ 60.000 դրամ
- 3-րդ տեղ՝ 40.000 դրամ

Աշակերտների համար՝
1-ին տեղ՝ 50.000 դրամ

2-րդ տեղ՝ 30.000 դրամ
3-րդ տեղ՝ 20.000 դրամ
Կլինեն նաեւ հատուկ անվանակարգերի հաղթողներ:
Պայմաններ՝
- Մրցույթին կարող են մասնակցել ուսանողներ եւ դպրոցի ավագ դասարանի աշակերտներ:
- Ստեղծագործության ծավալը պետք է լինի 5 էջից ոչ ավելի (եթե ստեղծագործությունն արձակ է):
- Ստեղծագործությունը պետք է լինի հեղինակային աշխատանք, այլ ոչ կրկնօրինակված, համացանցից բեռնված:
- Ընդունելի են աշխատանքների եւ տպագրված եւ ձեռագիր տարբերակները:

- Ստեղծագործությունների հետ ներկայացնել նաեւ հեղինակի անունը, ազգանունը, հայրանունը, ուսումնառության վայրը, հեռախոսը:
Ստեղծագործական աշխատանքները ներկայացնել ս.թ. հոկտեմբերի 23-ից մինչեւ նոյեմբերի 23-ը ՀՀԴ գրասենյակ (ք. Ստեփանակերտ, փ. Կնուսյանցների 17՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00 18:00՝ Նախապես գանգահարելով 047/94-38-43 հեռախոսահամարով):
Կարող եք ուղարկել նաեւ էլեկտրոնային տարբերակով hyd2015.mrcuyt@gmail.com հասցեին:
Հարցերի դեպքում կարող եք գանգահարել 047/94 38 43 կամ 097/ 360 310 հեռախոսահամարներով:

Հերթապահության 175 օրն իզուր չէր. «Արմեն» որբանոցը վերադարձվել է հայ համայնքին



հայ բողոքական եկեղեցու հիմնադրամին:

Լուրը հաստատել է նաեւ հիմնադրամի փաստաթան Սեբու Ալանզիլը, գրում է Ermenihaber.am-ը:

Հոկտեմբերի 27-ին լրացավ ապամոնտաժումը թույլ չտալու նպատակով ճամբարում սկսված հերթապահության 175-րդ օրը: Այդ ընթացքում ճամբարը չքանդելու համար պայքարող քաղաքացիների վրա երկու հարձակում է իրականացվել, որոնցից մեկի արդյունքում երկու մարդ էր վիրավորվել: Հարձակվողները փայտերով էին զինված:

«Արմեն» հայկական որբանոց-ճամբարը Ստամբուլի Թուզլա շրջանում գտնվող լքյալ ու կիսաքանդ մի շինություն է: Ներկայումս ավերակի վերածված շինությունը ժամանակին եղել է չքավոր ու որբ հայ երեխաների ամառային ճամբարը: 8.552 քմ տարածք զբաղեցնող կառույցը 1961-

ին գնվել է Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամի կողմից եւ ծառայել է որպես ամառային ճամբար: Հայտնի է, որ այստեղ են մեծացել նաեւ 2007-ին Թուրքիայում սպանված հայտնի հայ լրագրող Հրանտ Դինը եւ նրա կին Ռաբել Դինը: «Արմեն» որբանոց-ճամբարը, որը կառուցվել է հայ որբերի աշխատանքով, թուրքական պետության որոշումով փակվել է 1983-ին: Ծամբարում բնակվող երեխաները մասնակցել են շինարարական աշխատանքներին. նրանք ավագ են կրել ծովից, որով էլ կառուցվել է այն: Իշխանությունները երբեք թույլ չեն տվել վերանորոգել որբանոցը, ինչի պատճառով այն գտնվում է անմխիթար վիճակում:
Մանկատան հողատարածքի սեփականատեր Սեիթ Դուրմազի երեխաներից մեկը հետագայում հաջողացրել է որբանոցից 600 քմ տարածք գնել: 1974-ին այդ

տարածքը գնած կապալառուի կողմից բացված դատական գործընթացի արդյունքում նա կարողացել է զարտուղի ճանապարհով ճամբարի տարածքը կցել իր կողմից գնված 600 քմ-ին: 1977-ին փորձարկումներով հիմնադրամների մասին ընդունված նոր օրենքով հայ որբերի ճամբարը բնագործվել է: Ստամբուլում մայիսի 6-ին բուլդոզերները եւ հատուկ մեքենաները սկսել են քանդել հայ որբերի «Արմեն» ամառային ճամբարը: Դրա դեմն առնելու նպատակով Թուրքիայում գործունեություն ծավալող մի շարք կազմակերպություններ եւ պարզապես անհատներ շտապել են այնտեղ՝ կասեցնելու որբանոցի շենքի կործանումը: Ներկայումս որբանոցի շենքի քանդումը մասամբ դադարեցված է: Որոշ ժամանակ անց որոշումը ժամանակավորապես կասեցվել է:

panarmenian.net

Աֆորիզմներ

Մարդուն ճանաչելու համար պետք է հավատալ ոչ միայն նրա խոսքին, այլ նաեւ գործին:

Երջանկությունը չար մարդկանցից խուսափում, հեռու է գնում:

Սոցիալական անարդարությունների պայմաններում պաշտոնական կարծիքները եւ հասարակական կարծիքները սովորաբար հակասության մեջ են հայտնվում:

Կյանքը պայքար է ու պատրանք:
Դարեր շարունակ միլիոնավոր մարդիկ են զոհաբերվում հանուն արդարության ու պայծառ ապագայի, բայց դա դեռ երագանք է...

Մարդկային կյանքն «անկթարթ» է, որը ոմանք վատում են անտեղի, անիմաստ:

Արհամարհանքը դառն ցավ է հասկացողի համար, բոլորովին ոչինչ՝ չհասկացողի համար:

Չափազանցություններին տուրք տալը խանգարում է ճշմարտության բացահայտմանը:

Շահամոլն իր մատուցած «արջի ծառայության» համար էլ է կրկնակի վարձատրություն պոկում:

Չափավոր ու ճիշտ սկզբնական առողջ լինելու երաշխիքն է:

Կյանքը հետաքրքիր է նրանց համար, ովքեր սիրած գործով են զբաղվում ու կատարելագործվում:

Երբ երկու հիմար միանում են, ոչ թե խելջանում, այլ կրկնակի են հիմարանում:

Սերը սրտում է լինում, ոչ թե լեզվի վրա:

Լինում են պահեր, երբ անկարողը հաղթահարում է անհնարինը հոգու տոկունության շնորհիվ:

Խոստումը չկատարելը ոմանք վերագրում են հիշողության «դավաճանությանը»:

Մարդու ամեն մի գործողություն՝ հասարակ թե բարո, զգուշավորության կարիք է ունենում, որը պետք է միշտ հիշել:

Մարդու մեծագույն հաղթանակը կյանքը սիրելն է:

Ցավը հաղթահարել հնարավոր է առաջին իսկ պահից, ոչ թե գագաթնակետին հասնելուց հետո:

Թե ինչն է մարդը գայլից իրեն պաշտպանում՝ ոչխարը դա «հասկանում» է այն ժամանակ, երբ դանակը կոկորդին են դնում:

Խորտակվող նավից փրկություն չեն պահանջում:

Անկախություններ, ազատություններ ձեռք բերողների համար՝ դրանք, որքան իրողություն, նույնքան էլ պատրանք են:

Պաշտպանվել հնարավոր է տարբեր տիպի թշնամիներից, բացի «բամբակով» վիզ կտրողներից:

Մոլորվելը մոլորվողի համար ցավ ու հոգս է, իսկ մոլորեցնողի համար՝ հաղթանակի հրճվանք:

Կան խաղամուլներ, որոնց համար «խաղաքարտերը» ծանոթ մարդիկ են:

Երբ ազգը մի կերպ գոյատևելու հոգս է ունենում, փայլուն առաջադիմություն անկալիքը երագանք է:

Լամա ԴԵՏՐՈՍԱՆ